# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

# ԿՈՆԴԱԿ

## Ա Թ

## ԱԶԳԱՅԻՆՍ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

*Պարսկաստանի և Հնդկաստանեայ Առաջնորդ Գերապատիւ Եսայի Արքեպիսկոպոսի Հնդկաստանում գտնուած հօտին այցելելու համար, ի մօտոյ Սպահանից դէպ ի Հնդկաստան մեկնելուն առթիւ, ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճած է հեռագրել Կոնդակն ազդել, որը պէտք է կարդացուի եկեղեցիներում ի լուր Հնդկաստանի Հայ եղբարց։*

—

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

—

*Հայկազուն հարազատ որդւոց Մայր Աթոռոյս և Մերոց բնակելոց ի Հնդկաստան և ի զանազան քաղաքս և ի կղզիս կողմանցն նորին զԱստուածային օրհնութիւն և զփրկչական ողջոյն։ Սրբանուէր քահանայից, սարկաւագաց և ամենայն եկեղեցական դասուց, բարեպաշտ երեսփոխանաց, բարեսէր հոգաբարձուաց, հաւատարիմ՝ ատենակալաց և գանձապետաց, բարեջան վաճառականաց, ճարտարագործ արհեստաւորաց, քրտնաջան երկրագործաց, պարկեշտասուն տանտիկնայց, համեստափայլ օրիորդաց, ջերմեռանդ երիտասարդաց և առ հասարակ սիրելի ժողովրդոց Մերոց արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Քրիստոս խնդալ ի Տէր։*

*Շնորհք, ողորմութիւն, գթութիւն Աստուծոյ Հօր, պահպանութիւն մարդասիրութիւն Որդւոյն Միածնի Յիսուսի Քրիստոսի, սէր մխիթարութիւն և խաղաղութիւն կենդանարար Սրբոյ Հոգւոյն, շնորհատուիչ օրհնութեամբ և պարգևաձիր առատութեամբ Մօրս լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի վեհամագանձ Ս. Տաճարիս, սքանչելագործ Սրբոյ Գեղարդին և փայտին կենաց, ներկելոյ արեամբ փրկչին Յիսուսի և հրաշալի և նշխարաց Սրբազան Առաքելոցն Քրիստոսի նախակին Լուսաւորչաց Հայաստանեայցս աշխարհի Թադէոսի և Բարդուղիմէոսի և ոգւոյ երկրորդի Լուսաւորչի Հոգւոյ Մերոյ Սրբոյն Գրիգորի Մեծի և բնաւից սրբութեանց զանձելոց տաճար ի Մայր Աթոռս Արարատեան հովանացին ի վերայ հոգւոց և մարմնոց Ձերոց, և որովք զօրացեալ և արիացեալ կացջիք անսասան ի փորձութեանց կենցաղոյս՝ յարատևեալք ի բարի վարս և ի յաջողութիւնս ամէն։*

*Եւ ընդ աստուածապարգև օրհնութեան և փրկչական ողջունիս յայտ լիցի Ձեզ, զի բարբառի ի Մեզ սէրն Հայրական և վասն ա-յարմամբ սիրո Մեր ի հոգս և ի խնամս զհոգևոր որդւոց Մերոց սիրելեաց՝ պանդխտելոցդ ի հեռաւոր երկիր օտար ի Հնդկաստան և ի կղզիս, զորս յանձն արար վերին Տեսչութիւնն հովուութեան Մերում և պաշտպանութեան, և չիցէ արդեօք ի Մեզ իղձ տեսանել և մխիթարել զորդեակս Մեր սիրելիս և մխիթարիլ ի Ձէնջ բստ հոգւոյ։*

*Սակայն ծանր զբաղմունք և պարտիք Հայրապետական պաշտամանս պաշարեալ զՄեօք՝ անհնարին առնեն զկատարումն ըղձիցս վափագմանց։*

*Եւ աչա ոչ սակաւ մխիթարիմք, զի բստ անձկանաց սրտի Մերոյ ուղևորի Գերապատիւ Առաջնորդ վիճակիդ սրբազան Եսայի Արք-*

եկեղեցւոյն՝ ի գլխոց Մերոց յայցելութիւն և ի նուիրակութիւն կարգեցաք Հնդկաստանի, որ եկեալ հասեալ Տերամբ առ ձեզ մխիթարեցէ զձեզ շնորհիւ Հոգւոյն Սրբոյ՝ քարոզելով զԲանն կենաց, ուսուցանելով զբանաւոր հօտդ առ ջուրս հանգստեան և ի վայրս դալարս խաղաղութեան, յառաջադիմութեան և ազգաշինութեան, Աստուածային սիրոյ և ուղղափառ հաւատոյ Հայաստանեայցս առաքելական սուրբ եկեղեցւոյ, անօրինելով զպէտս և զկարիս եկեղեցեաց և դպրոցաց ձերոց, ամենեցուն ըստ իւրաքանչիւրոցն հոգևոր կարօտութեանց մատուցանելով զխութիւն, և ի լրումն ամենայնի մատակարարելով զատարեալ ի Մէնջ զօրհնալոյս Միւռոնն յեկեղեցիս վիճակիդ.

Սիրելի որդիք Մեր ի Տէր, գիտէք զի պանծացեալ Հայրն Ձեր սրտաբեկ աղաչմամբ պանդխտեցան ի գրկաց սիրելի Հայրենեաց իւրեանց յայդ երկիր հեռաւոր, բայց սիրտ և իղձք նոցա, հոգւովք և մտօք յարաժամ ի Հայաստան և ի Ս. Էջմիածին էին, նոյն և յարժանաւոր շառաւիղս նոցունց գոյ սիրտ հայրենասէր և ազգասէր, ջերմեռանդութիւն կրօնի Հայաստանեայցս առաքելական եկեղեցւոյ և փափագ յառաջադիմութեան, այլ ծառայութեան և կենդանութեան վառարանի ազգիս, նախանձախնդիր հանդիսանալով միշտ հայրենի օրինաց, կանոնաց, աւանդութեանց, ծիսից և պաշտամանց ի մէջ օտարաց, ջերմ եռանդեամբ զուն գործէք անմոռաց պահել զմայրենի լեզու մեր, սրբութեամբ աւանդելով որդւոց և յաջորդաց Ձերոց, ընդ արտաքին գիտութեանցն, ի պատիւ Հայաստան ազգիս և եկեղեցւոյս առաջի այլոց ազգաց և պետութեանց փայլելով առաքինութեամբ, օրինակ բարեաց լինել ամենեցուն. Ուստի և Մեք զհայրական պարտս հատուցանելով յորդորեմք զսիրելի որդիսդ Մեր, բարենախանձ եռանդեամբ Ձերով ի բաց թօթափեցէք զամենայն հնարս չարին և զամենայն կիրս վնասակարս, և ի բաց խորշեցարուք յօտարամուտ աղանդոց բանսարկուին, սիրեցէք զմիմեանս և զօտարս իբրև զընկերս, զխաղաղութիւն կալջիք և զսէր առանց կեղծի առ միմեանս և առ ամենայն մարդիկ. Պահպանեցէք զհասարակօգուտ և զազգօգուտ հաստատութիւնս, խնամեցէք զորբս և զայրս և մի անտարբեր ականջ հայեսջիք ի ձայն բարոյական փրկութեան ազգիս, ի Սիոն մեր—ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.

Այլ և լիայոյս եմք, զի ըստ հայրենասէր բարեպաշտութեան Ձերում արժանաւոր հիւրասիրութեամբ ընկալջիք զՍրբազան Եսայի Արքեպիսկոպոսն, զԱռաջնորդն Ձեր՝ իբրև զփոխանորդ և զնուիրակ Մեր և իբրև զպաշտօնեայ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Արդ և Մեք օրհնեմք զՁեզ զամենեսին սրտեռանդն փափագանօք, և աղաչեմք զամենակալն Աստուած, զի հաճոյարար բնակեսցի ի սիրտս և ի հոգիս ձեր, պարգևեսցէ ձեզ զյաջողութիւնս յամենայն գործս Ձեր բարիս, պահեսցէ զձեզ ազատ յամենայն չար պատահարաց և շնորհեսցէ սիրտ սուրբ և հոգի ուղիղ զբարին, զհաճոյն և զկատարեալն խորհել և գործել, և լուսաւորեսցէ զհոգիս ննջեցելոց Ձերոց և արժանի արասցէ երկնից արքայութեանն.

Ողջ լերուք և օրհնեալք յԵրկնաւոր Հօրէ մերմէ և ի Մէնջ. Ամէն.

յամի Տեառն 1894
Յուլիսի 26
Ու ըստ տումարիս մերում
ՌՅԽԳ Հրամից ի
Հայոց 1136

(կնքեալ կնքով աստուածային Կ.)

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.

## ԱԶԳԱՅԻՆ

Ամսիս 11-ին Խաչվերացի տօնին առաւօտեան ժամը 8-ին Գ. Հայ. ճեմարանի երախայրիք աշակերտները հանդիսանալով Ս. Տաճարի զանգակատան մօտ հանդուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի գերեզմանի շուրջը, հոգեհանգիստ կատարեցին միաբանութեան մի քանի եկեղեցականների և վարդապետների, այլ և Հայ. ճեմարանի ուսուցիչների ու սաների